

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԻ ՋԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խ. Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

Միջնադարյան ֆեոդալական իրավունքի մեծարժեք հուշարձաններից մեկը՝ Մխիթար Գոշի Դատաստանագիրքը շատ քիչ է ուսումնասիրված։ Այն հանգամանորեն չի քննված, մանավանդ, բանասիրական առումով։ Մինչդեռ Դատաստանագիրքի բանասիրական ուսումնասիրությունը նախապայմանն է ամեն մի այլ առումով ուսումնասիրության, ոչ միայն և ոչ այնքան այն պատճառով, որ բաղմաթիվ են սկզբնաղբյուրի մեղ հասած գրչագիր օրինակները, այլ այն պատճառով, որ ակնհայտորեն տարբեր են դրանք թե՛ իրենց արտաքին նկարագրով և թե՛, մանավանդ, սկզբունքային նշանակություն ունեցող մի շարք հոդվածների բովանդակությամբ։

Դատաստանագիրքը ուսումնասիրողներից հարցի բանասիրական կողմին որոշ չափով անդրադարձել են միայն երկուսը՝ Վ. Բաստամյանցն ու դերմանացի հայագետ Հ. Կարստը։ Իր ընդարձակ «Յառաջարանութեան» մեջ Բաստամյանցը հարցին նվիրել է ընդամենը մոտ մեկ էջ։ Իվարկելով էջմիածնի Մատենադարանի այն ձեռագրերը, որոնք պարունակում են Մխիթար Գոշի Դատաստանագիրքը, Բաստամյանցը այնուհետև դրում է. «Այս բոլոր ձեռագիր օրինակները կարելի է բաժանել երկու դասակարգի. №№ 488(485), 489(209), 749(657) և Սինոգի օրինակները գրեթե բոլորովին նման են միմյանց, իսկ №№ 490(486) և 492(488) օրինակները՝ միմյանց, բայց այս երկու խմբի մեջ մեծ տարբերություն կա բառերի և ոճի կողմից, թեպետ իմաստը գրեթե միշտ միևնույնն է։ Բացի սրանից՝ №№ 490(486), 492(488) և 749(657) օրինակների մեջ Դատաստանագիրքի հոդվածները բաժանված են երկու մասն՝ եկեղեցական և Աշխարհական, իսկ №№ 488(485) և 489(209) օրինակների մեջ բոլոր հոդվածները խառնած են միասին, և այն շատ անկանոն կերպով։ Այլև № 489(209) օրինակը շունի ամենևին Մխիթարի նախադրությունը»¹։ Մի կողմ թողնելով փաստական անճշտությունները², նշենք միայն, որ Բաստամյանցի այդ դասակարգումը հիմնված է առաջին հայացքից աչքի ընկնող արտաքին տարբերությունների վրա և չի արտահայտում հարցի ներքին կողմը։

1 «Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց», հրատարակություն Վ. Բաստամյանցի, Վաղարշապատ, 1880, Յառաջարանութիւն, էջ 110, այսուհետև՝ «Դատաստանագիրք Հայոց»։ Մեջբերման մեջ փակագծերում ցույց են տրված նույն ձեռագրերի ներկա համարները ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի։

2 № 749(657) ձեռագրում Դատաստանագիրքը երկու մասի բաժանված չէ։ Հոդվածները հետևում են իրար թվահամարների հերթականությամբ։ № 489(209) ձեռագրում նախադրությունը կա, միայն թե տեղադրված է ոչ թե Դատաստանագիրքի, այլ ձեռագրի սկզբում, էջ 2րդ—17րդ։

ճիշտ է, Բաստամյանցի նշած երկու ձեռագրախմբերում հոդվածների իմաստը շատ հաճախ միեւնույնն է, բայց եղած տարբերությունները խիստ էական են։ Ուստի բաժանման հիմքում առաջին հերթին պետք է դրվեն այդ և ոչ թե ուրիշ հատկանիշներ։ Հենց այդ պատճառով էլ Բաստամյանցը Դատաստանագրքի ձեռագրերի պարզ խմբավորումից այն կողմ չի անցել, չնկատելով այդ ձեռագրերում առկա միանգամայն տարբեր երկու խմբագրություններ։

Խնդրո առարկա հարցն ավելի հանգամանորեն է քննել Հ. Կարստը։ «Հայկական իրավունքի պատմության ուրվագիծ» աշխատության մեջ նա շորս էջից բաղկացած մի ենթագլուխ է նվիրել Դատաստանագրքի ձեռագրերի դասակարգմանը⁴։ Կարստը Բաստամյանցից մի քայլ առաջ է անցել։ Նշելով ձեռագրախմբերի միջև եղած տարբերությունները, նա միաժամանակ որոշակիորեն հավաստել է նաև Դատաստանագրքի տարբեր խմբագրությունների առկայությունը։ Կարստը նշում է երեք խմբագրություն, թեև ձեռագրերը բաժանում է երկու խմբի։ Բայց ձեռագրերի, հետևապես նաև խմբագրությունների, դասակարգումը Կարստը կատարում է նկարագրական եղանակով, ձևական-դոգմատիկական մեթոդով, որը մի ժամանակ իշխում էր արևմտյան իրավագիտության մեջ։ Նա գրում է. «(Ձեռագրերը—Խ. Բ.) երկու պիսավոր խմբի բաժանելու հիմքը ամենից առաջ ձևական է, գլուխների տեղակարգմանը վերաբերող»⁵։ Խմբագրությունների մեջ Կարստը չի տեսնում դասային-դասակարգային և սոցիալ-տնտեսական տարբեր շահերի արտաբերում, այդ պատճառով խմբագրությունների ստորաբաժանման հիմքում դնում է միայն ձևական կամ լեզվա-ոճական առանձնահատկություններ։ Բացի այս բոլորից, Կարստը ձեռագրերի հետ անմիջականորեն չի շփվել։ Օգտվելով միայն Բաստամյանցի հրապարակած տվյալներից, նա ոչ միայն կրկնել է վերջինիս փաստական որոշ անձշտությունները, այլև դրանց հիման վրա շատ հեռու գնացող ինչ-ինչ եզրակացություններ արել, որոնք, բնականաբար, չէին կարող ճիշտ լինել⁶։ Մեր մի հոդվածում⁷, խոսելով Դատաստանագրքի երկու խմբագրությունների մասին, ձեռագրերը նույնպես բաժանել էինք երկու մեծ խմբի՝ Ա և Բ, միաժամանակ նշելով, որ Ա խմբի ձեռագրերի մի ամբողջ շարք առանձին ենթախումբ է կազմում։ Ներկա հոդվածը հիմնականում նվիրված է այդ հարցի լուսարանմանը։ Ա խմբի ձեռագրերի մի մասը մի քանի հատկանիշներով տարբերվում է վենետիկյան ձեռագրով ներկայացված խմբից։ Այս խմբի ձեռագրերը պայմանականորեն նշում ենք Գ տառով։ Ե խմբին են պատկանում Մաշտոցի անվան Մատենադարանի հետևյալ ձեռագրերը՝ №№ 2593, 485, 657, 2776, 3291, 8964 և այլն։ Գ խմբում Դատաստանագիրքը բնորոշվում է հետևյալ առանձնահատկություններով։

1. Դատաստանագրքի համարյա բոլոր հոդվածները, ներառյալ Նախաբոլոթունը, զգալի չափով, իսկ երբեմն նաև խիստ, համառոտված են։ Հատկանշականն այն է, որ համառոտելու ամբողջ աշխատանքը կատարվել է ոչ

³ J. Karst, Grundriß der Geschichte des armenischen Rechtes, Zeitschrift für vergleichende Rechtswissenschaft, neunzehnter Band, Stuttgart, 1906, էջ 370—374, այսուհետև՝ J. Karst, Grundriß...

⁴ Նույն տեղում, բնագծումը հեղինակինն է։

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 371 և 372։

⁶ «Երկու խմբագրություն Մխիթար Գոշի Դատաստանագրքի», «Բանբեր Մատենադարանի», № 6։

թե իրավարանական միտքը, իրավական դրույթները կրճատելու հաշվին, այլ իրավական բովանդակությունը կրոնական հավելումներից զտելու ուղղությամբ: Ճիշտ է, այս ձևագրախմբում Դատաստանագրքի ոչ բոլոր հոդվածներն են լիովին զտված կրոնական տարրից, սակայն, նկատի ունենալով ժամանակը և նախատիպ խմբագրությունը, այն նվազագույնի է հասցված:

2. Շինականների մասին հայտնի հոդվածը, ճորտացումն արգելող խմբագրությամբ, տրված է հենց այս ձևագրախմբում:

3 Ա խմբագրության համեմատությամբ Դ խմբագրության մեջ խոսքը հակիրճ է, իրավարանական միտքը՝ որոշ չափով խառնված, իրավական որոշ դրույթների անորոշ սահմանումները՝ վերացված:

4. Դատաստանագրքի շարադրված է ժամանակի ժողովրդական-խոսակցական լեզվով՝ միջին հայեանով:

Դիմենք ձևագրերին.

Ա խմբագրություն	Դ խմբագրություն
Հոդված Իէ	Հոդված Իէ
Ցաղագս դատաստանող զինար- րուաց և նոցունց վնասուց	Վասն զինարրուաց և նոցին վնասուցն
Ի զինարրուս վնաս ինչ ևղևալ ըստ հոգևոր մեր օրինաց մի լիցի յաղագս այնորիկ ինչ ներել, զի նախ արբե- ցութիւնն դատիւ եւ թէ անդ զմիմեանս ի մարտնչելն բեկանիցեն և կամ խե- ղիցեն, հաւաստի դատ լիցի, և բժշկու- թեանն և խափանածոյն տուժիցի: Եւ եթէ մահ գործի, տեսցի պատահումնն, թէ մախանօք և կամ վրիպմամբ և կամ այլօք այսպիսիք իցէ, յերկուցն շարժեալ ևղև, թէ միոյն առաւելեաց, և այնպէս վճիռն հատցի, զին արեանն տուժեսցի, և զինարրուացն կցորդու- թիւնն դատիցի հաւաստի, և նոցայն ոնդ նմին լիցի տոյժն: Եւ թէ յզգայու- թեանցն ինչ վնասիցի, ըստ այնմ և դատն լիցի, բայց զի ըստ օրինացն մահու իսկ են արժանի, սլլ զի խրատ ի ձեռս առցեն, և ըստ աւե- տարանիս ապրիցին: Զայդ պատշաճ վարկանիմք դատաստան, և զայդ նա- խախնամարտ գործիցեն, զի թէ չիցէ երկիւղ նոյն գործոյ, չարի, մի լիցի խրատ, բայց միայն տոյժ և ասլաշխարութիւն ⁷ :	Ի մէջ գինէխում մարդկան եթէ ընդ միմեանս կովին և կոտրի ձեռն կամ այլ անդամ պարտի բժշկել և զպակասու- թիւն բանիցն լնուլ, և թէ մահ հանդի- պի կամաւ արեան գինք առցեն անսլա- կաս և այլ ընկեբքն որ անդրէն, նորա այլ տուգանար են ըստ չափոյն և թէ ակն կամ ատամն խլեսցի զգինն առ- ցեն ու դրամ և թէ ոտն է և ձեռն և ան- բժշկելի մնայ նոյն ու դրամ և այլն: ձեռագիր N 485, էջ 50ա

7 Այստեղ և հետագայում Ա խմբագրության հոդվածները մեջ են բերված ըստ ՎՍՍԻ ԳԱ ձևագրերի ինստիտուտի հայկական ֆոնդի N 14 ձևագրի, որն ընդօրինակված է վնենտիկյան հնագույն, անթվակիր գրչագրից:

Մի փաստ էլ, որ վերաբերում է իրավական դրույթի անորոշությունը վերացնելուն.

Ա խմբագրություն

Գ խմբագրություն

Հոդված 2

Հոդված 2

Եւ Եթէ անասուն բերեալ իցէ
զգլուխն տացեն, եւ զաճն յերկուս
բաժանիցեն յաղագս աշխատելո ի
սլահելն:

Եւ թէ անասուն բերեալ իցէ կինն
զգլուխն առցէ և զկէս աճոյն և
կէսն աշխատան տացի վասն աշխատու-
թեան և ծախիցն

ձեռագիր N 2776

Փաստերի թիվը կարելի է շարունակել՝ ներգրավելով Դատաստանագրքի համարյա բոլոր հոդվածները, բայց բերվածն էլ բավական է թվում: Այս փաստերը վկայում են այն մասին, որ Դ ձեռագրախմբում առկա է Դատաստանագրքի մի նոր՝ երեսուրդ խմբագրություն:

Նորը և ինչո՞ւ է կազմվել Դատաստանագրքի այս նոր խմբագրությունը: Այս կապակցությամբ մատենագրական վկայություններ չկան: Հարցը պարզելու միակ հնարավոր միջոցը բանասիրական պրպտումների ճանապարհն է, որը տվյալ դեպքում տանում է դեպի Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի Դատաստանագրքերի համեմատությունը: Սմբատի Դատաստանագրքի մասին այս կամ այն առիթով խոսք ասած բոլոր ուսումնասիրողները (Ղ. Ալիշան, Վ. Բաստամյան, Ղ. Հովնանյան, Հ. Կարստ, Խ. Սամվելյան և ուրիշներ) իրավացիորեն հավաստել են, որ Սմբատ Սպարապետը օգտվել է Մխիթար Գոշի Դատաստանագրքից: Վերջերս սակայն, պատմ. դիտ. գոկտոր Ա. Գալստյանը փորձում է ապացուցել իր կողմից առաջ քաշված այն տեսակետը, ըստ որի Սմբատ Սպարապետը ոչ միայն չի օգտվել Մխիթար Գոշի Դատաստանագրքից, այլև այս վերջինիս գոյությունն իսկ նրան հայտնի չի եղել⁸: Բանասեր Էմ. Պիվազյանը արդեն ցույց է տվել Ա. Գալստյանի այս տեսակետի սկզբունքորեն ոչ-ճիշտ լինելը⁹, ուստի դրա քննությունն այստեղ ավելորդ է: Սակայն անհրաժեշտ է նշել Ա. Գալստյանի նույնպես ոչ-ճիշտ մի քանի հետևությունները՝ նա գրում է. «Նախնական ձեռագրերի ուսումնասիրությունից (Երևի՞ ձեռագրերի նախնական ուսումնասիրությունից—Խ. Թ.) պարզվում է, որ Գոշի XIII դարի ձեռագիրը ունեցել է մոտավորապես 174 հոդված և ծավալով մոտ երեք անգամ փոքր է, քան այն, որ ներկայումս հրապարակել է Բաստամյանցը: Գոշի Դատաստանագիրքը XVII—XVIII դարերում հեղեղվել է զանազան եկեղեցական ու աշխարհիկ կանոններով»¹⁰: Ի միջի այլոց՝ Բաստամյանցը Մխիթար Գոշի Դատաստանագիրքը «հրապարակել է» ոչ թե «ներկայումս», այլ մոտ 80 տարի առաջ:

Մաշտոցի անվան Մատենադարանում Մխիթար Գոշի Դատաստանագրքի XIII դարի թվակիր միայն մեկ ձեռագիր կա: Դա N 488 ձեռագիրն է՝ ընդօրին-

⁸ Տե՛ս С м б а т С п а р а п е т, С у д е б н ы й, Երևան, 1958, Առաջաբան, էջ XXI, Ա. Գալստյան, Սմբատ Սպարապետ, 1961, էջ 167—134:

⁹ Տե՛ս Էմ. Պիվազյան, Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի Դատաստանագրքերի առնչակցությունը, «Բաների Մատենադարանի», 1969, N 5, էջ 117—134:

¹⁰ Ա. Գալստյան, Սմբատ Սպարապետ, էջ 118:

նակված 1295 թ.: Բաստամյանցի «Յառաջաբանութիւնից» հայտնի է, որ նա տպագրել է հենց այդ ձևագիրը, հետևապես Ա. Գալստյանի ակնարկած XIII դ. ձևագիրը և Բաստամյանցի «Հրապարակածը» տարբեր բաներ չեն, այլ միևնույն ձևագիրը, որը ունեցել է և ունի ոչ թե մոտավորապես 174, այլ ուղիղ 254 հոդված: Ավելացնենք նաև, որ Մաշտոցի անվան Մատենադարանում եղած Դատաստանագրքի 34 ձևագրերից ոչ բոլորն են պարունակում լրիվ տեքստը: Կան նաև թերի ձևագրեր: Բայց, նույնիսկ թերի ձևագրերից և ոչ մեկում Դատաստանագրքի հոդվածների քանակը 174 կամ մոտ 174 չէ, այլ ավելի կամ պակաս: Ճիշտ չէ նույնպես Ա. Գալստյանի այն պնդումը, թե «Գոշի Դատաստանագիրքը XVII—XVIII դարերում հեղեղվել է զանազան եկեղեցական ու աշխարհիկ կանոններով: XVII—XVIII դարերում Դատաստանագիրքը ոչ միայն չի հեղեղվել զանազան կանոններով, այլև չի ավելացվել և ոչ մի հոդված (բացառությամբ է կազմում մի ձևագիր, որտեղ Դատաստանագրքին վերջից կցված է 4 հոդված): Ընդհակառակը, թերի ձևագրերի որոշ մասը ընկնում է հենց այդ դարերին: Ա. Գալստյանը գրում է. „В 1905 году он (Карст—*h. 10.*) издал первый том своего исследования под заглавием „Sempadscher Kodex“... Второй том изданный им в 1906 году, называется „Grundriß der Geschichte des armenischen Rechtes“. Как в первом, так и во втором томе своего исследования И. Карст развивает ту мысль, что „Судебник“ Мхитара Гоша и „Судебник“ Смбата являются лишь компиляцией франкских законов“¹¹. Նախ՝ „Grundriß der Geschichte des armenischen Rechtes“ աշխատությունը առանձին ուսումնասիրություն է և ոչ թե „Sempadscher Kodex...“-ի երկրորդ հատորը: „Sempadscher Kodex...“-ի երկրորդ հատորը „Grundriß...“-ից ծավալով մոտ 10 անգամ մեծ սովոր մի գիրք է և պարունակում է մերառի Դատաստանագրքի՝ Կարստի հրատարակության ծանոթագրությունները: Երկրորդ հարստը իր աշխատություններից և ոչ մեկում ոչ միայն չի զարգացնում այն միտքը, թե Մխիթարի և Սմբատի Դատաստանագրքերը Փրանկյան օրենքների կոմպիլացիա են, այլ նույնիսկ ակնարկ չի անում այդ մասին: Ընդհակառակը, Կարստը գտնում է, որ դրանք ազդալին Դատաստանագրքեր են:

«Հայկական իրավունքի պատմության ուրվագիծ» աշխատության մեջ Կարստը աղյուսակի ձևով ցույց է տվել, թե Մխիթար Գոշի Դատաստանագրքի հոդվածներից յուրաքանչյուրը Սմբատի Դատաստանագրքի ո՞ր հոդվածի համար է աղբյուր հանդիսացել: Շատ տեղ չզրադեցնելու համար բերում ենք այդ աղյուսակի առաջին սյունակը միայն, որն ընդգրկում է 1—40 հոդվածները¹²:

Ի բացատրություն աղյուսակի նշենք, որ Կարստը միշտ Rb.=Rechtsbuch անվանում է Սմբատ Սպարապետի Դատաստանագիրքը, իսկ՝ Dat.=Datatanagirk՝ Մխիթարինը (տե՛ս աղյուսակ 1):

Կարստը Սմբատ Սպարապետի Դատաստանագիրքը համեմատել է Մխիթար Գոշի Դատաստանագրքի տպագիր տեքստի հետ: Բայց կա Մխիթար Գոշի Դատաստանագրքի ձևագրերի մի ամբողջ խումբ (Ա և Գ միասին), որը մի շարք հատկանիշներով, այդ թվում և հոդվածների հերթականությամբ, տարբերվում է տպագրից, բայց որում վերջին խմբում Դատաստանագիրքը բաժան-

¹¹ Смбат Спаранет. Судебник, էջ XIV:

¹² См. J. Karst, Grundriß..., էջ 408:

ված չէ Լրկու մասի՝ Եկեղեցական և աշխարհիկ օրենքների նիժև կարստի համեմատական աղյուսակում Դատաստանադրքի տպագիր աւքստը փոխա- րինենք վերոհիշյալ խմբի (միենույն է՝ Ա, թև Գ) որևէ ձևադրով, օրինակ՝ Մաշտոցի անվան Մատենադարանի № 2593 ձևադրով, ապա կստացվի հե- տևյալ պատկերը (տե՛ս աղյուսակ 2)։

Աղյուսակ 1

Rb.	Dat.	Rb.	Dat.	Rb.	Dat.	Rb.	Dat.
1	II 1	12	I 27	24	{ I 69 I 70	34	Sah. Kan. 35—40
2	II 2	13	I 28			35	Sah. Kan. 41—42
3	II 10	14	I 29	25	I 71	36	Sah. Kan. 43
4	II 11	15	I 30	26	I 72	37	I 101
5	II 12	16	I 31	27	I 73	38	I 102
6	II 13	17	I 32			39	I 103
7	II 14	18	II 17	28	{ I 79 I 82	40	I 104
8	I 22	19	II 18	29	I 82		
9	II 15	20	I 3	30	I 97		
10	{ II 16 I 23	21	I 66	31	I 98		
	{ I 24	22	I 67	32	I 99		
11	{ I 25 I 26	23	I 68	33	{ I 100 Sah. Kan. 1—12		

Աղյուսակ 2

Սմբատի Դատաստանա- դրքը ըստ կարստի հրա- տարակուսյան	Մխիթար Գոշի Դատաս- տանադրքը ըստ № 2533 ձևադրի	Սմբատ	Մխիթար
1	2	21	157
2	20	22	158
3	31	23	159
4	32	24	{ 160 161
5	33	25	162
6	34		
7	35	26	163
8	36	27	164
9	37	28	{ 170 173
10	{ 38 39	29	173
	{ 40	30	{ 199 200
11	{ 41 42	31	{ 201
	{ 43	32	202
12	44	33	{ Մահակ 1—12
13	45	34	Մահակ 35—40
14	46	35	Մահակ 41—42
15	47	36	Մահակ 43
16	48	37	203
17	49	38	204
18	50	39	205
{ 19	4	40	206
20			

Մեր կազմած աղյուսակից բխում է այն հետևությունը, որ Սմբատն օգտվել է Մխիթար Գոշի Դատաստանադրքի ոչ բն տպագիր տեխստով՝ ներկայացված խմբի որևէ ձևադրից, այլ մի այնպիսի ձևադրից, որը պատկանում է Ա կամ Գ խմբին։

Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի համեմատությունը Մխիթար Գոշի Դատաստանագրքի Ա և Գ խմբագրությունների հետ քննվող հարցի մեջ որոշակիություն է մտցնում: Պետք է նշել, սակայն, որ մեզ հետաքրքրող տեսանկյունով զուգահեռներ գտնելը Սմբատի Դատաստանագրքում շատ դժվար է, որովհետև վերջինիս մոտ Մխիթարի Դատաստանագրքի համապատասխան հոգվածները բերված են խիստ համառոտ ձևով, տրված է ամենաէական, իրավական-նորմատիվ արժեք ունեցող նյութը միայն, «խոսքի սիրտը», ինչպես վկայում է հիշատակագիրը. «Եւ զսիրտ բանիցն առեալ եզի համառոտարար», կամ՝ «Եւ արդ զրեցի... համառոտարար զսիրտ բանիցն»: Այդուհանդերձ Մխիթարի Դատաստանագրքի երկու խմբագրությունների և Սմբատի բնագրի մասնաբաժին համեմատությունը ուղագրով շատ փաստեր երևան հանեց: Ստորև բերվում են զրանցից մի քանիսը:

Սմբատ Սպարապետի Դատաստանագիրք, րստ Ա. Գալստյանի հրատարակությամբ
հոգվ. Ա

Ա խմբագրություն
հոգվ. Բ

Գ խմբագրություն
հոգվ. Բ

Արծաթ լաւարին իշխանացն լիցի. պըղինձ և երկաթ և նմանք նոցա զօրացն. զիպակ, կերպաս ամենաջն օրինակաւ թագաւորին լիցի, և ասրեղէն պատուական և կտաւ՝ իշխանացն. և անսրգ ասրեղէն և կտաւեղէն զօրացն

Ոսկի ակունք և կերպաս ամենաջն կերպիւ զորս առցեն լաւարի թագաւորաց բաժին է, իսկ արծաթք և մարգարիտք իշխանացն. նոն և ասրեղէն պատուական, իսկ անարդ ասրեղէն և կտաւ և պղինձ և երկաթ և ալ ալպիսի՝ զաւրացն լիցի
ձև. ԼՅ 485

Ոսկի և ոսկով կրտաւ՝ որ ի շահն ուրդի՝ թագաւորին է. և արծաթն ու արծթով կտաւ՝ և պրիսմէն իշխանացն է. և բրուդէնն ու բամբակեղէնն և պղինձն ու երկաթն զաւրացն է

էջ 12

Առանց մեկնարանությունների էլ ակնհայտ է, որ տվյալ դեպքում Սմբատն օգտվել է Մխիթար Գոշի Դատաստանագրքի ոչ թե Ա խմբագրությունից, այլ՝ Գ:

Ա խմբագրություն
հոգվ. Բ

Գ խմբագրություն
հոգվ. Բ

Սմբատ
հոգվ. Ա

Եւ եթէ շինիցէ քաղաք և կամ գղեակ և աշխարհագիր եթէ առնիցէ և եթէ դահեկան և զրամ հաստատիցէ և կամ հատանիցէ ըշխանութիւն կալցի րստ իրաւանց զատաստանի. ալ իշխանաց ոչ է իրաւացի հատանել զահեկան և զրամ և եթէ հատանիցէ հրամանաւ թագաւորին լիցի:

Եւ եթէ շինիցէ քաղաք կամ բերդ և թէ աշխարհագիր առնիցէ և թէ դահեկան կամ զրամ հատանիցէ ինքնիշխան կամաւ քալաւցի, րստ տրինաց դատաստանի, ալ իշխանց ոչ է պարտ զահեկան կամ զրամ հատանել և եթէ հատանիցէ թագաւորին կամաւք լիցի:

Եւ քաղաւորն մեկ է որ կարէ գեկան շինել և քաղաք և բերդ և մեծ դերոց կանդարաւ... Եւ թէ իշխան կամենալ յալսոց շինել նա թագաւորին հրամանով շինէ (էջ 9):

Ա և Գ խմբագրությունները տարբերություններն արտահայտող նրբերանգներն ու նշանք միայն մեկը: Ըստ Ա խմբագրության՝ թագավորը պարզապես իրավունք ունի քաղաք կառուցելու, զրամ հատելու և այլն: Ըստ Գ խմբագրու-

թյան՝ թագավորն այդ անում է ինքնիշխան, միահեծան կամրով։ Վերջին ձևով է արտահայտվում և Սմբատը (միայն թագավորն է, որ կարող է...)։

Ա խմբագրություն հոդվ. Զ	Գ խմբագրություն հոդվ. Ջ	Ամբաստ հոդվ. ՀԲ
Եւ եթէ անասուն բերեալ իցէ զլուին տացեն եւ դաճն լեր- պուս բաժանիցեն յա- ղագս աշխատելոյ ի պահելն ¹³	Եւ թէ անասուն բերեալ իցէ կինն բզ- զլուիւծն առցէ և զէէս աճոցն և կէսն ալրկանն տացի վասն աշխա- տութեան և ծախիցն	Ապա անասուն զինչ որ լինի՝ զլուիւքն դառնայ, եւ ալճն ի կէս լինի վասն արածելոյ կամ ստածելոյ կամ վասն այլ իրաց՝ վարձ կամ այլ աւելի պակաս չկայ (էջ 84)։

Ա խմբագրությունում նորմի ձևակերպումը հստակ չէ։ Իրավարանական անորոշությունը լայն հնարավորություն է ընձեռում նորմին տալու ինչպես տարածական, այնպես էլ սահմանափակ մեկնարանում։ Հայտնի է, որ ամբողջը կարելի է բաժանել երկու մասի՝ ցանկացած հարաբերությամբ. օրինակ՝ $\frac{2}{9} - \frac{7}{9}$, $\frac{1}{3} - \frac{2}{3}$, $\frac{2}{5} - \frac{3}{5}$, $\frac{1}{2} - \frac{3}{4}$ և այլն, և այլն։ Արդ՝ անասունների աճը ի՞նչ հարաբերությամբ էր բաժանվում երկու մասի, և ո՞ր մասն էր մնում տղամարդուն կամ անցնում կնոջը, — Ա խմբագրությունը չի սահմանում։ Հասկանալի է, որ այս անորոշությունը լրացուցիչ վեճեր կարող էր առաջացնել բաժանվող ամուսինների միջև։ Գ խմբագրությունում արդեն, ամենայն հավանականու-
թյամբ դատական փորձն ամփոփելու հետևանքով, այդ անորոշությունը վե-
րացված է։ Նորմին տրված է հստակ և օրենսդրի գիտավորությունից տարբեր մեկնարանումը բացառող ձևակերպում։ Ըստ Գ խմբագրության՝ ամուսնա-
լուծության դեպքում կինն ստանում է իր բերած անասունները լրիվ չափով և
սճի կեսը, մյուս կեսը մնում է տղամարդուն։ Ինչպես տեսնում ենք, Սմբատի
մոտ նորմը սահմանված է Գ և ոչ թե Ա խմբագրության սկզբունքով, հետևա-
պես Սմբատն օգտվել է Գ խմբագրությունից։

Մի փաստ ևս.

Ա խմբագրություն հոդվ. ԺԵ	Գ խմբագրություն հոդվ. ԺԾ	Ամբաստ հոդվ. ԶԸ
Եթէ զիւական ախ- տիւ լցեալ ալր զկին իւր անարդէ նախա- տանօք միշտ եւ եթէ խորթք իցեն եւ աճո- րիկ աղագաւ մուրի, դա- տաստան լիցի. թէ յա- ռաջնումն յանձին կա- լաւ դնոսա, համբերել պարտի, ապա թէ ոչ յազգ զարձցի կնոջն	Եթէ ալր զկին իւր անարդէ անդադար մա- խանաք, եթէ խորթ կալր ի մեջ իւրեանց և վասն ալորիկի նախա- տեն զիւրեարս դատաս- տան լիցի եթէ պում- նով հառ զկինն և զխորթերն պարտ է համբերել, ապա թէ ոչ յազգ կնոջն դար- ձուսցեն զխորթն	Եւ թէ անհանգրս- տութիւն լինի ի յալ- րուկնաց մեջ եւ վասն խորթերոյ լինի պատ- ճառն, նա պատեհ է, որ թէ ՊՈՄՆՈՎ, չլինի չալկել ալրիկն զխոր- թերն ի մաւրն առ- նուլն, նա տան զխոր- թերն ի յազգն, որ հանդչին (էջ 91)։

¹³ Միխիթար Շոշի Գատաստանադրքի ոտուերեն հրատարակության մեջ հատվածը ճիշտ չի թարգմանված. «Если жена привела в дом мужа скот, возвращается ей основное, приплод же делится между ними поровну за труды по уходу за скотом» (Армянский судебник Мхитара Гоша, Ереван, 1954, էջ 43—44)։ Բնագրում չի ասված թե աճը պետք է հավասար չափով բաժանել ամուսինների մեջ, այլ՝ աճը բաժանվում է երկու մասի։

Քննենք նորմը: Ըստ Ա խմբագրության, եթե ամուսինների զժտության պատճառը կնոջ երեխաներն են, ապա, եթե ամուսնանալիս տղամարդը հանձն է առել երեխաների հոգացողությունը, պետք է համբերի, իսկ եթե հանձն չի առել, երեխաներին պետք է վերադարձնել կնոջ ազդականներին: Դժվար չէ նկատել, որ այստեղ խոսքը բանավոր հանձնառության, ամուսինների միջև կայացած բանավոր համաձայնության մասին է: Փ խմբագրությունում նորմի հիստորիկը էապես տարբերվում է Ա խմբագրությունից: Բանավոր համաձայնությունը փոխարինված է գրավոր համաձայնությամբ, պայմանագրով: Ընթերցողը, անշուշտ, արդեն նկատել է, որ Սմբատի մոտ ես գործում է պայմանագիրը, գրավոր և ոչ թե բանավոր համաձայնությունը, հետևապես տվյալ դեպքում Սմբատն օգտվել է Փ և ոչ թե Ա խմբագրությունից:

Վա մի ուշագրավ փաստ եւ, որը թեև հայտնի է բանասիրությանը, բայց լննարկվող հարցի տեսանկյունով երբեք չի ուսումնասիրվել: Խոսքը Սմբատի Գատաստանագրքի առաջարան-հիշատակարանի մասին է, որտեղ ինքը՝ հեղինակը վկայում է, որ օգտվել է Մխիթարի Գատաստանագրքի Փ խմբագրությունից: Մեր ձեռագրում հիշատակարանը զգալի չափով տարբերվում է վենետիկյան ձեռագրից, ուստի մեզ հետաքրքրող հատվածը զուգահեռաբար մեջ ենք բերում երկու ձեռագրից էլ:

Վենետիկյան ձեռագիր

Առ որս ես Սմբատս՝ անարժան
և մեղաւոր ծառայս աստծոյ
որդի Կոստանդեա թագաւորա-
հոր եւ եղբայր բարեպաշտ
թագաւորին հայոց Հեթմոյ,
բազումս աշխատեցայ ի սայ
ծերացեալ մտաւ ի հին
և յանհասկնալի բառից

և ես բազում աշխատութեամբ
փոխեցի զսա ի մեր հեշտալուր
բառս ի թուականութեանս հայոց
ՉԺԴ, ի հայրապետութեան
տեառն Կոստանդեայ, եւ ի
թագաւորութեան Հեթմոյ եւ
որդոյ սորա Լեւոնի

Մաշտոցի անվան Մատենադարանի

N 487 ձեռագիր, էջ 6 ա

Առ որս ես Սմբատս՝ որ չեմ արժան
և մեղաւոր ծառայս աստծոյ, որդի
Կոստանդեա թագաւորահար եւ եղբայր
թագաւորի բարեպաշտին Հեթմոյ
բազում աշխատանաւք աշխատեցա ի
Գատաստանագի[ը]քս ծերացեալ մտաւ
և ձեռաւ ի հին և ի դժուարարառ
և յանհասկանալի դրոց,
վասնդի այլակերպած էր և հեռացած
ի հին հայ բառէն ի նորոյս, հանց
որ իսկի չէին հասկնալ և ոչ
լսկտել դայր:

և ես բազում աշխատութեամբ փոխեցի
զսա ի մեր հեշտալուր և ի սովորական
բառս ի թուականութեան հայոց ՉԺԴ
ամին, ի հայրապետութիւնն Կոստան-
դեա եւ թագաւորութեանն բարեպաշտին
Հեթմոյ և որդւոյ սորա:

¹⁴ Հիշատակարանի տարբերակները մեջ են բերված ոչ թե բոլոր Սմբատի Գատաստանագրքի հրատարակությունների, այլ բոլոր ձեռագրերի (վենետիկյան ձեռագրի հիշատակարանը վերջրել ենք Կարստի ստորև նշվող աշխատության Einleitung-ից) հետևյալ պատճառով:

Կարստը Սմբատի Գատաստանագրքի իր հրատարակության ներածությունում (J. K a r s t, Sempadscher Kodex aus dem 13. Jahrhundert oder mittelarmenisches Rechtsbuch, Strasburg, 1905, Einleitung, էջ XV—XVI), հատուկ ուշադրություն է նվիրել այս հիշատակարանին: Զուգահեռաբար մեջ բերելով տարբերակները և որոշ դատողություններ անելով դրանցից յուրաքանչյուրի սկզբնականության, հավաստիության աստիճանի, անաղարտու-

«Վասնզի այլակերպած էր և հեռացած ի հին հայ բառն ի նորոյս» արտահայտութեան մասին Ղ. Հովնանյանը գրում է. «Ոչ մենք կարող եղանք հաս-

թյան մասին. կարտը գրում է. «Այս բոլորից հետո Առաքարանի սկզբնական խմբագրութեանը ներկայանում է հետևյալ ձևով»։ Եվ կարտը հիշատակարան-առաքարանի երկու տարբերակների միաձուլումով կատուցում է մի առաքարան. որը բաա նրա, եղել է սկզբնականը. անմիջականորեն Սմբատի գրչից բխածը։ Ըր կատուցած այդ առաքարանն էլ կարտը գրել է Դատաստանագրքի ընդգրի մեջ։

Ա. Գալստյանը նույնպես իր հրատարակած ընդգրում գետեղել է կարտի կատուցած առաքարանը, և ոչ թե № 187 ձևագրինը, սակայն առանց մի խոսք ասելու այդ մասին.

Ահավասիկ.

կարտ. Einleitung. էջ XVI.

և ընդգիր, էջ 13

Առ որս ես՝ Սմբատս անարժան և մեղաւոր ծառայս աստուծոյ, որդի Կոստանդեայ թագաւորահայր և եղբայր բարեպաշտ թագաւորին հայոց Հեթմոյ՝ բազում աշխատանար աշխատեցայ ի Դատաստանագիրքս ծերացեալ մտաւր—վասնզի այլակերպած էր և հեռացած ի հին հայ բառն ի նորոյս հայնց որ իսկի չէին ի հասկնալ, և ոչ յօկտել գայր—և ես բազում աշխատանար (ընդգրում աշխատութեամբ) փոխեցի զսա ի հին և ի դժարաբաւ և յանհասկերնայի գրոց ի մեր հետալուր և ի սովորական բառս, ի թրականութեան հայոց. ԶԺԴ ամին՝ ի հայրապետութեան Տեառն Կոստանդեայ և ի թագաւորութեան բարեպաշտին Հեթմոյ և որդոյ սորա Լեւոնի. Առ որս ազաչեմ զամենեւեան վասն սիրոյն Քրիստոսի յիշել զմեզ և մեղաց թողութիւն խնդրել ի Քրիստոսէ, զի և զուր յիշեալ լիջիր առաջի Քրիստոսի. եւ արդ գրեցի զսա վասն հաստատութեան սրբոյ եկեղեցոյ և զոյանալոյ երկրի. և ապա վասն աշխարհական դատաւարաց և թագաւորաց. եւ զսիրտ բանիցն առեալ եղի համառոտարար. Զորս ազաչեմ անմեղադիր լինել իմոյ նուաստութեանս վասն զի չէր իմ բան. և ձեռաւ իմովր աշխատեցայ և փոխեցի զսա ի չար և ի դառն ժամանակի.

Յառաջ պատեհ համարեցար զվիճակեալ դատաւորացն գրել բուն յառաջ զթագաւորացն. վասն զի յաստուծոյ կարգեցաւ թագաւորութիւնն, և յաստուծոյ տեղին է համարած ի յորդոր. եւ զնոցին դատաստանն և զիրավունքն գրեցար. և ապա զկարգաւորացն և զաշխարհականացն և զայրուկնոցն.

Հիշատակարանի երկրորդ մասը, սկսած «առ որս ազաչեմ» բառերից մինչև վերջ, կարտը, և նրան հետևելով Ա. Գալստյանը, նույնպես վերադրում է Սմբատին. Էմ. Պրվազյանը, սակայն, դա համարում է գրչի հիշատակարանը (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», N 5, էջ 127, ծանոթ.)։ Հարցը կարտու է գեղես աշխարհակրկիտ ըննութեան.

Ա. Գալստյան, Смбат Спарпет,

Судебник, էջ 4—5

Առ որս ես՝ Սմբատս անարժան և մեղաւոր ծառայս Աստուծոյ, որդի Կոստանդեայ թագաւորահայր և եղբայր բարեպաշտ թագաւորին Հայոց Հեթմոյ, բազում աշխատանար աշխատեցայ ի Դատաստանագիրքս ծերացեալ մտաւր, վասն զի այլակերպած էր և հեռացած ի հին հայ բառն ի նորոյս հայնց որ իսկի չէին ի հասկնալ, և ոչ յօկտել գայր. եւ ես բազում աշխատութեամբ փոխեցի զսա ի հին և ի դժարաբաւ և յանհասկերնայի գրոց ի մեր հետալուր և ի սովորական բառս ի թրականութեան հայոց. ԶԺԴ ամին՝ ի հայրապետութեան Տեառն Կոստանդեայ և ի թագաւորութեան բարեպաշտին Հեթմոյ և որդոյ սորա Լեւոնի. Առ որս ազաչեմ զամենեւեան վասն սիրոյն Քրիստոսի յիշել զմեզ և մեղաց թողութիւն խնդրել ի Քրիստոսէ, զի և զուր յիշեալ լիջիր առաջի Քրիստոսի. եւ արդ գրեցի զսա վասն հաստատութեան սրբոյ եկեղեցոյ և զոյանալոյ երկրի և ապա վասն աշխարհական դատաւորաց և թագաւորաց. եւ զսիրտ բանիցն առեալ եղի համառոտարար. Զորս ազաչեմ անմեղադիր լինել իմոյ նուաստութեանս վասն զի չէր իմ բան, և ձեռաւ իմովր աշխատեցայ և փոխեցի զսա ի չար և ի դառն ժամանակի. Յառաջ պատեհ համարեցար զվիճակեալ դատաւորացն գրել. բուն յառաջ զթագաւորացն վասն զի յկատուծոյ կարգեցաւ թագաւորութիւնն և յկատուծոյ տեղին է համարած ի յորդոր և զնոցին դատաստանն և զիրավունքն գրեցար. և ապա զկարգաւորացն և զաշխարհականացն և զայրուկնոցն.

կրնալ և ոչ այլք»¹⁵։ Էմ. Պիվադյանը, մեջբերելով և հիշատակարանի վերահիշյալ մասը, և՛ Ղ. Հովնանյանի խոսքերը, գրում է. «Պետք է ենթադրել, որ հիշատակարանի այս առիդը խանգարված է»։ Այնուհետև մեջ բերելով վենետիկյան ձեռագրից հիշատակարանի հետևյալ հատվածը՝ «Առ որս ևս Սմբատս... բազում աշխատեցայ ի սա ծերուցեալ մտօք ի իմ և յանհասկանալի բառից...»։ Էմ. Պիվադյանը ավելացնում է. «1618 թ. գրված (մեր Մատենադարանի— իս. Թ.) ձեռագրի «այլակերպած էր և հեռացած ի հին հայ բառէն ի նորոյս» անհասկանալի արտահայտություն փոխարեն, այս հիշատակարանում մեր կողմից ընդգծված բառերի գոյությունը ապացուցում է, որ իսկապես այդ արտահայտությունը խաթարված է»¹⁶։ Նախ, մեր Մատենադարանի ձեռագրի «այլակերպած էր...» արտահայտություն փոխարեն չէ, որ կա վենետիկյան ձեռագրի «ի հին և յանհասկանալի բառից» արտահայտությունը, վերջինս կա թե՛ մեր, և թե՛ վենետիկյան ձեռագրում։ Վենետիկյան ձեռագրի հիշատակարանում բացակայում է «վասն զի այլակերպած էր... յօկտել գայր» հատվածը։ Այս հատվածը խանգարված-խաթարված համարելու պատճառը հավանաբար անհասկանալիությունն է եղել կամ բացակայությունը վենետիկյան ձեռագրում։

Քննարկվող հատվածը տրամաբանական շարունակությունն է և անհրաժեշտ բացատրությունը դրանից առաջ արտահայտված մտքի։ Մտքի տրամաբանական այդ շարունակությունն ու անհրաժեշտ բացատրությունը հիշատակարանի վենետիկյան տարբերակում չկա։ Հենց այս փաստը և մի քանի այլ տվյալներ վկայում են, որ վենետիկյան ձեռագրում հիշատակարանը սկզբնական անադարտությամբ չի պահպանվել և հետագայում ենթարկվել է նոր խմբագրման։ Հիշատակարանը համեմատաբար անվթար ու սկզբնական ձևով պահպանվել է Մատենադարանի ձեռագրում։

Այժմ քննենք «անհասկանալիության» հարցը։ Սմբատն ասում է. «Բազում աշխատանաւ աշխատեցա ի Դատաստանագիրքս ծերացեալ մտաւ և ձեռաւ ի հին և ի դժուարաբառ և յանհասկանալի գրոց», այսինքն՝ շատ աշխատեցի Դատաստանագրքի դժվարաբառ, անհասկանալի ու հին գրի, որ միեւնոյնն է թե՛ մատյանի, ձեռագրի վրա։ Ինչո՞ւ էր փոխվող Դատաստանագիրքը դժվարաբառ ու անհասկանալի։ Սմբատն շտապում է բացատրել. «Վասն զի այլակերպած էր և հեռացած ի հին հայ բառէն ի նորոյս» հանց, որ իսկի չէին հասկրնալ և ոչ յօկտել գայր», այսինքն. որովհետև այլակերպված էր ու հեռացած հին հայ լեզվից (ուրեմն գրաբարից), և (մեր) այս նոր լեզվից (կիլիկյան բարբառից), այնպես որ, ոչ հասկանալ կարող էին և ոչ էլ օգտվել կամ օգտագործել։ Այստեղից ամենևին էլ պարզ չէ, «որ Սմբատը իր ձեռքի տակ ունեցել է մի դատաստանագիրք գրաբար, հին և դժվարաբառ լեզվով», ինչպես գրում է Էմ. Պիվադյանը¹⁷, այլ ուղիղ հակառակը։ Դատաստանագիրքը Սմբատի համար եղել է դժվարաբառ ու անհասկանալի հենց այն պատճառով, որ լեզուն

15 Ղ. Հովնանյան, Հետադուրությունը նախնեաց ուսմանը ներդրումը, Վիեննա, 1897, էջ 36, ծանոթ.։

16 Էմ. Պիվադյան, Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի Դատաստանագրերի տարնալակցությունը, էջ 127, ծանոթ.։

17 Նույն տեղում, էջ 127։

գրաբար չի եղել, այլ գրաբարից հեռացած¹⁸, ինչպես վկայում է Սմբատը: «Ի հին հայ բառէն»՝ գրաբարից հեռացած լեզվով էլ հենց գրված է Մխիթար Գոշի Դատաստանագրքի Գ խմբագրությունը: Այսպիսով, ինքը՝ Սմբատը եւս վկայում է, որ իր ձեռքի տակ եղել է Դատաստանագրքի Գ խմբագրությունը: Հետեւապես Մխիթար Գոշի Դատաստանագրքի Գ խմբագրությունը կազմվել է 1265 թ. առաջ: Այս ժամանակը կարելի է դնել ավելի որոշակի սահմանների մեջ: Նախ, բավական ժամանակ էր պետք, որպեսզի Դատաստանագրքի Գ խմբագրությունը Հյուսիսային Հայաստանից հասներ Կիլիկիա: Այս փաստը, մի քանի այլ տվյալների հետ միասին, խոսում է այն մասին, որ Մխիթար Գոշի Դատաստանագրքի Գ խմբագրությունը կազմվել է XIII դարի սկզբներին, հավանաբար այն ժամանակ, երբ հեղինակը դեռ կենդանի էր:

Դատաստանագրքի գործնական կիրառման քիչ թե շատ տեղական փորձը պետք է պահանջ ներկայացնե՝ զտել օրենսդիրը կողմնակի տարրերից և թողնել նրա մեջ միայն իրավական-նորմատիվ նյութը: Գործնական այդ նպատակադրումով էլ կազմվել է Դատաստանագրքի Գ խմբագրությունը: Գ խմբագրության դրույթները միաժամանակ ապացույց է այն բանի, որ Դատաստանագիրքը գործող օրենսդիրք է եղել:

Մխիթար Գոշի Դատաստանագրքի խմբագրությունների ու ձեռագրախմբերի հարցն ամփոփելուց առաջ անհրաժեշտ է կանգ առնել մի խնդրի վրա եւս:

Մխիթար Գոշը գրում է. «Բայց վայելուչ եղեալ՝ թէ ժողովով կամ ընդ բազումս քննելով էր եղեալ սա (Դատաստանագիրքը—Խ. Ք.) զոր եւ ես ախորժելով խնդրէի (var. բաղձանօր հայցէի), բայց ոչ պատահեաց այս փասն բազում պատճառի. զի թէ դատաւորաց երկուց եւ երից ի միասին լինել ի դատեն իրաւունս լինել համարեցար, որչափ եւս առաւել եւ այսմ պարտ էր ի միասին լինել բազմաց եւ քննել զիրս եւ սպա գրով գրոշմել: Բայց զի այս ոչ պատահեաց, փասն այնորիկ զայսոսիկ պակասութիւնն եւ գրով լնում, զնոցա զօրութիւնն եւ զհրաման առնում վկայ (var. այլ զայսոսիկ զտեղի լնումը գրոց վկայութեամբ, զորս ի զօրութենէ նոցա առնումք)»¹⁹: Ժամանակի հասունացած պահանջներից ելնելով, Մխիթար Գոշը վաղուց ի վեր մտադրվում է համադրային նշանակություն ունեցող մի Դատաստանագիրք գրել: Այդպիսի մի մեծ ձեռնարկություն՝ իրականացնելու մտաւախությունից բխող որոշ տատանումներ հաղթահարելուց հետո, Մխիթարն անցնում է գործի: Եվ ահա Դատաստանագիրքը պատրաստ է: Բայց Մխիթարը քաջ զիտակցում է, որ մասնավոր անձի կողմից կազմված մի Դատաստանագիրք չի կարող համադրային ընդգրկմամբ գործադրվել, առանց համադրային սանկցիայի: Եվ նա «ախորժելով խնդրում» ու «բաղձանօր հայցում» է, որպեսզի ադգային ժողով գումարվի

¹⁸ Բնագրի համապատասխան հատվածը ճիշտ չի թարգմանված ուսուերեն: Ինչպես տեսանք, Սմբատն ասում է, որ իր ձեռքի տակ եղած Դատաստանագրքի լեզուն հեռացած էր հին հայ բառից, այսինքն՝ գրաբար չէր, մինչդեռ Ա. Գալստյանի թարգմանությամբ ստացվել է հակառակը, այսինքն՝ որ Դատաստանագրքի լեզուն գրաբար էր: Ա. Դալբուսյանը թարգմանել է. «И его (Судебника—Խ. Ք.) древнеармянский язык настолько отошел от нынешнего, что стал совершенно непонятен и негоден для пользования» (տե՛ս С м б а т С п а р а п е т, Судебник, էջ 4): Պետք է թարգմանվեր այսպես. «...и его язык настолько отошел (как) от древнеармянского (так и) от (нынешнего) нового, что стал совершенно непонятен и негоден для пользования»:

¹⁹ «Դատաստանագիրք Հայոց», Նախագրություն, էջ 68:

Դատաստանագրքին օրենսդրական ուժ տալու համար: Ինչ-ինչ պատճառներով, հավանաբար նաև քաղաքական անբարենպաստ իրադրության հետևանքով, ժողով չի գումարվում: Մխիթարը կանգնում է փակուղու առջև: Դատաստանագրքին պակասում է օրենսդրական ազդյունից բխած լինելու ուժը: Ազգային ժողով գումարելու անհաջող փորձից հետո այդ ուժը գտնել այլևս հնարավոր չէր: Ի՞նչ անել: Մխիթարն ստիպված սկսում է մտածել այդ ուժը մի այլ, բայց համահման ուժով փոխարինելու մասին: Եվ նա գտնում է ելքը: Դատաստանագրքին օրենսդրական ուժ տալու համար դիմում է մի ազդյունի, որի ուժը (ժամանակը նկատի ունենալով) թերևս ավելի մեծ էր, քան ազգային ժողովինը: Մխիթարը դիմում է Ս. զրբին և Կանոնգրքին, որոնց «գորությունը» և լրացնում է իր Դատաստանագրքի օրենսդրական ուժի պակասությունը: Չուր մտավախություն: Ժամանակի պահանջը շատ ստիպողական էր, որպեսզի Դատաստանագիրքը, առանց արհեստական այդ գորության, միայն ազգային լինելու փաստով, նոխձեր իր իրավունքները: Բայց այս հանգամանքը մեզ երեւում է հետագա դարերի բարձունքից, իսկ Մխիթարին չէր կարող երևալ (դոնե սկզբում), ուստի նա չէր կարող չմտահոգվել: Ինչևէ: Մխիթարի վերաբերյալ վիպագությունը կարևոր եզրահանգումների հիմք է տալիս:

1. Մխիթար Գոշը դիմել է Ս. զրբին ու Կանոնգրքին հարկադրված, իր ցանկությունը, մտադրություններին ու աշխատության բնույթին հակառակ: Ուսումնասիրողներից ոչ ոք ուշադրություն չի դարձրել այս հանգամանքի վրա: Այդ պատճառով Դատաստանագրքի բնութագրման ու գնահատման հարցում հաճախ ծայրահեղությունների մեջ են ընկել:

2. Մինչ Ս. զրբով ու Կանոնգրքով «գորություն» ստանալը, Դատաստանագիրքը այլ պատկեր է ունեցել: Ամենից առաջ նրա մեջ չեն եղել Աստվածաշնչի այն բնդարձակ հատվածները, որ կան այժմ՝ (Ա և Բ խմբագրություններում): Ազգային ժողովի գումարումը ձախողվելու պատճառով և դրանից հետո է, որ արդեն գրված, պատրաստ Դատաստանագիրքը ենթարկվել է փոփոխությունների և բաժանել այն տեսքը, որ ունի, օրինակ, վնասվելիս՝ ձևազրկում: Հետևապես եղել է Դատաստանագրքի մի խմբագրություն ևս՝ սկզբնականը, որն ունեցել է այլ նկարագիր, հատկապես բովանդակության առումով, քան գոյություն ունեցող խմբագրությունները: Դատաստանագրքի սկզբնական խմբագրությունը մեզ չի հասել, համենայն դեպս մեզ ծանոթ ձևազրկերից և ոչ մեկում չի պահպանվել:

Այսպիսով, Մխիթար Գոշի Դատաստանագիրքն ունեցել է չորս խմբագրություն՝ սկզբնական և Ա, Բ, Գ, որոնցից սկզբնականը մեզ չի հասել: Դատաստանագրքի ձևազրկերն էլ համապատասխանաբար բաժանվում են երեք խմբի՝ Ա, Բ և Գ: Դատաստանագրքի ուսումնասիրության հիմքում չի կարող դրվել ոչ որևէ կոնկրետ ձևազրկ, ոչ էլ նույնիսկ խմբագրություններից որևէ մեկը: Հակառակ դեպքում ուսումնասիրությունը չի կարող լինել բավարարիչ, իսկ եզրահանգումները կարող են արժեք ունենալ միայն մասնավորությունների համար: Դատաստանագրքի, զգալի չափով նաև հայկական ամբողջ իրավունքի ուսումնասիրությունը կարող է լինել խոր ու ամբողջական, եթե միաժամանակ նկատի առնվեն բոլոր խմբագրությունները: Սակայն այս դեպքում հետադուսողը կանգնելու է շատ դժվարահաղթահարելի խոչընդոտների առաջ և՛ դրչադրերի շատություն և՛, մասնավորապես, այն պատճառով, որ Ա և Գ խմբագրությունները հրատարակված չեն: Խմբագրություններից յուրաքանչյուրը մի փուլ է թե

ամբողջությամբ Պատաստանադրքի, և թե՛ առանձին կարևոր խնդիրներին
վարդապետան մեջ: Խմբագրությունները Պատաստանադրքի վարդապետան նշա-
հաձողերն են:

Ուստի Պատաստանադրքի բոլոր խմբագրությունների քննական-համեմա-
տական բնագրերի հրատարակությունը անհրաժեշտություն է, վաղուց հասու-
նացած պահանջ:

РУКОПИСИ И РЕДАКЦИИ СУДЕБНИКА МХИТАРА ГОША

Х. А. ТОРОСЯН

(Р е з ю м е)

Судебник Мхитара Гоша является значительным памятником средне-
векового права. Судебник дошел до нас в многочисленных рукописях. До
последнего времени была известна лишь одна его редакция, изданная
В. Бастамянцем еще в 1880 г. Однако сличение рукописей показало, что
изданный В. Бастамянцем текст представляет вторую редакцию Судебни-
ка. В ряде рукописей сохранилась и дошла до нас также первая редакция.

Тщательное изучение рукописей дает основание утверждать, что су-
ществует также третья редакция. Путем сличения третьей редакции с Су-
дебником Смбата Спарапета и на основании некоторых других фактов
установлено, что третья редакция Судебника Мхитара Гоша составлена
в начале XIII в. Кроме того, сличение двух судебныхников показало еще, что
Смбат Спарапет при составлении своего труда пользовался третьей ре-
дакцией Судебника Мхитара Гоша. Имеются некоторые данные в пользу
того мнения, что существовала еще одна, первоначальная редакция Су-
дебника, которая, по всей вероятности, до нас не дошла.